# ԾԱՂԻԿ


ՀԱՆԴԷՍ

40 ՓԱՐԱ — ԱԶԳԱՅԻՆ ու ՔԱՂԱՔԱԿԱՆ — ՓԱՐԱ 40

ԾԱՂԻԿ շաբաթը երկու անգամ կը հրատարակուի Չորեքշաբթի եւ Շաբաթ օրերն: — Տարեկան բաժանորդագրութեան գինն է 100 ղրշ. արծաթ. —Վեցամսեայն 50. — Գաւառաց համար 115 ղրշ. Վեցամսեայ 60. — Ծանուցման տողը 5 ղրշ.

Որ եւ է նամակ կամ գրութիւն պէտք է ուղղել. Առ Արտօնատէր եւ Տնօրէն Անտոն Սաքաեան, Եսկի Զափթիյէ ճատտեսի Նշան Լ.Փ. Պէրպէրեանի Տպարանն. Խմբագրութեան յանձնուած գրութիւնք ետ չեն տրուիր:

ԹԻՒ 247 Դ. ՏԱՐԻ — 1889 — ՍԵՊՏԵՄԲԵՐ 13 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ


## ԱԶԳ

—

Պատիւ ունինք ծանուցանել մեր ազնիւ ընթերցողաց թէ՝ ազգային ծանօթ հրապարակագիր Պրն. Մինաս Էֆէնտի Գափամաճեան Ծաղկի Խմբագրութիւնն ստանձնած է, զոր պիտի սկսի յառաջիկայ շաբաթ օրէն վարել, —ըստ մասնաւոր պայմանի,— քէգ երկու տարի։

Այս կարգադրութիւն անշուշտ գոհ պիտի ընէ Ծաղկի ազնիւ ընթերցողները, որովհետեւ այսու պիտի տեսնեն թերթին մէջ նիւթոց ճոխութիւն, ընտրութիւն և զանազանութիւն՝ յծորդեալ ընդ փորձառութեան, և այսպէս Ծաղիկ յետ այսորիկ պիտի ներկայանայ իւր յարգելի ընթերցողաց յոյժ բարեփոխեալ պայմաններով։

Գափամաճեան էֆէնտի յանձնարարութեան պէտք չունի, որովհետեւ 27 տարիէ ի վեր կը գտնուի գրական հրապարակի վրայ, ուստի և ծանօթ է ընթերցասէր ազգայնոց, որ՝ կը սիրենք յուսալ թէ՝ գոհութեամբ պիտի ողջունեն մեր թերթին մէջ իւր Խմբագրութիւնը։

Ա. ՍԱՔԱԵԱՆ

—o—

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ


Ազգային.— Ուղեւորութիւն ի Պրուսա.— Գիտական.— Խրատութիւններ.—Ասկէ անկէ.—Լէֆ տնուն ձուկը.— Տիկին Բանգալըն (վիպասանութիւն)։


## ԱԶԳԱՅԻՆ

Հիւսիսային Հեռագրական Գործակալութիւնն հետեւեալը կը հեռագրէ Էջմիածնէն մայրաքաղաքի ռուս լրագրաց, օգոստոս 31 թուականաւ։

«Այսօր, կէս օրին, այստեղ ժամանեց Պարսից Վեհ. Շահը, Հայոց Մայր Աթոռի Պարապադրան առջեւ. Ն. Վեհափառութիւն ողջունեց հոգեւորականաց բարձրագոյն դասը, Գէորգեան ճեմարանի երգեցիկ խումբը կ'եղանակէր ի պատիւ Շահին յօրինուած երգ մը. Արքեպիսկոպոսաց առաջնորդութեամբ և չքեղազարդ ամպհովանիի ներքեւ Վեհ. Շահը մեկնեցաւ դէպի Մայր եկեղեցին, ուր Ն. Վեհափառութեան դիմաւորեց Մակար կաթողիկոսն։ Վեհ. Շահի քալած ամբողջ ճանապարհը ծածկուած էր կարմիր չուխայով, որու վրայ սփռուած էին թանկագին կերպասներ և ծաղիկներ. Մայր եկեղեցւոյ դրան առաջ կաթողիկոսը բարի գալստեան ճառ արտասանեց, շնորհակալութիւն մատուցանելով այն հոգածութեան համար, զոր ունի Վեհ. Շահն իւր հայ հպատակաց նկատմամբ։ Շահն ուրախութիւն յայտնեց որ երկիցս կ'այցելէ Հայոց տասնեւհինգ դարեան Սրբավայրը։ Ապա իւր յարգանաց հաւաստիքը մատոյց կաթողիկոսին և յայտարարեց թէ Ինք միշտ, բայց այսուհետեւ առանձինն ուշադրութեամբ պիտի հոգ տանի իւր սիրելի Հայոց վիճակին։»

—

Կրօն. Ժողովն ի նիստ գումարեցաւ երկուշաբթի օր ի Պատրիարքարան, ընդ Նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր և Ատենապետութեամբ Գեր. Խորէն արքեպիսկոպոսի, և զբաղեցաւ կարեւոր խնդիրներով։

—

Պատրիարքական փոխանորդ Գեր. Գէորգ Ծ. վարդապետ Իւթիւճեան հիւանդ ըլլալով, մի քանի օրէ ի վեր բացակայ կը գտնուի իւր պաշտօնատեղիէն։

## ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

# Ի ՊՐՈՒՍԱ

Ի Պրուսա ուղեւորութիւն մ'ըրի եւ անդ մի քանի օր կենալէ յետոյ վերադարձայ ի մայրաքաղաք։ Պարտ անձին կը համարիմ յարգոյ ընթերցողաց յայտնել տեսածներս, որք յայտնուելու արժանի են արդարեւ։

Ա.

Նոր կուսակալը, Վսեմ. Րիզա փաշան, ի 5 ներկայ ամսոյս ժամանեց ի Պրուսա։ Օտար կառավարութեանց հիւպատոսներ, հասարակութեանց պետեր եւ առաջնորդք, փութացին բարի գալուստ մաղթել Նորին Վսեմութեան եւ շնորհաւորել զինքն այդ բարձր պաշտօնին համար։

Կայսերական հրովարտակը սովորական շքով կարդացուեցաւ ի Դուան ամսոյս 9ին, ի ներկայութեան հասարակութեանց պետերու, առաջնորդներու, վարչական ժողովոյ անդամոց, պաշտօնէից, եւն.։ Գեր. Բարթուղիմէոս Սրբազան, տեղւոյն Առաջնորդն, որ ներկայ էր եկեղեցական դասով եւ Քաղ. ժողովոյ անդամներով, յանուն իւր հօտին շնորհաւորական ազդուլթուղթ մի կարդաց, որ Նորին Վսեմութեան եւ ամէն հանդիսականաց կողմէն հաճութեամբ ունկնդրուեցաւ.

Բ.

Ազգային գործոց գալով ուրախութեամբ ստուգեցի որ նախանձելի վիճակի մէջ են անոնք շնորհիւ Գեր. Բարթուղիմէոս Սրբազանի նման կարող եւ հանճարեղ եկեղեցականի մը առաջնորդութեան։ Արդարեւ եկեղեցւոյ բարեկարգութիւնը, Առաջնորդարանի եւ դիւանի գործոց կանոնաւոր ընթացքը մեծ պատիւ կը բերեն ազգին։ Վասն այնորիկ Սրբազան Առաջնորդն իրաւամբ թէ տեղւոյն [illegible] եւ ազգայնոց պատկառելի է, ու նոցա սէրը կը վայելէ։ Ի նմին կարգի են նաեւ Ազգ. ժողովոյ եւ Ազգային վարժարանի բարեկարգ վիճակը։

Յիշատակութեան արժանի են նաեւ մի քանի բարենորոգմունք, որք Սրբազան Առաջնորդի գործք են։ Պրուսայի Առաջնորդարանը այժմ ջուր ունի։ Սրբազանն յաջողած է մեծ ծախսով այս կարեւոր ձեռնարկն ի գլուխ հանել։ Զարմանալի է որ այս քաղաքի փողոցներու մէջ հայ մուրացիկներ չը կան։ Այս անպատեհութեան դարման եղեր է, աղքատաց գանձանակներու կանոնաւոր կերպիւ հասոյթներովն։

Արժ. Աբիստակէս վարդապետ ամիս ու կէս է ի վեր յանկողնոյ տառապելէ վերջ ապաքինելու մօտ է։

Ուսումնասիրաց ընկերութիւնը յաջողեր է 40,000 ոսկւոյ արժէք ունեցող կալուածոց տէր լինիլ։ Յիսուն ոսկի ամսական կու տայ ազգային աղքատ վարժարանաց։

Կրթասիրաց ընկերութիւնն ալ յաջող վիճակի մէջ է։

Գ.

Հայ հռովմէական հասարակութիւնն ալ ոչ նուազ յառաջադէմ վիճակի մէջ կը գտնուի։

Գերապայծառ Առաջնորդն, Յարութիւն Ճամճեան նոր վարժարան մի կառուցանել տուեր է, ուր հասարակութեան արական սեռի մանկունք կը դաստիարակուին։ Նոյն վարժարանի համար կալուածներ ալ կապուած են։

Հռովմէական ազգայինք յաջողեցան նաեւ եկեղեցի մը շինել տալ յԷսքի Շէհիր։

## ԳԻՏԱԿԱՆ

Արուեստահանդէսին գիտական տեսարանը։—Ելեքտրականութեան կատարած դերը։—Հեռաձայնութիւնք։—Ելեքտրական [illegible] կայարաններն։—Մեքենայից պալատն։—Արուեստահանդէսին ծախքը եւ հասոյթը։

Կրնանք ըսել թէ 1889ի Արուեստահանդէսն երկու է. ցերեկուան եւ գիշերուան արուեստահանդէսներն։ Այն որ միայն մէկը կը տեսնէ, ճշգրիտ գաղափար մը չը կրնար ունենալ Շան դը Մարսի շքեղութեանց վրայ։ Գիշերային տեսարանը աննկարագրելի է։ Մարդ հիացեալ կը մնայ այդ մոգական լուսաւորութեանց առջեւ։ Լուսեղէն հեղեղ մ'է կարծես որ ամէն կողմանէ կ'իջնէ։ Ամէն ինչ կը փայլի, կը շլացնէ, կը բոցավառի։ Այսչափ [illegible] մշտնջենական [illegible] մէջ, կ'ըսես թէ ճարտար արուեստագէտ մը շողշողուն երանգապնակ մը գործածած է, լուսով ծածկելու արուեստահանդէսին, ոսկեզօծելու մեծամեծ գմբէթներն եւ հրեղէն ընելու սիւներն ու կամարներն։ Հեռուէն կը տեսնես լուսոյ գոյներով պճնեալ [illegible] մը, մէջին շէնքերու վրայ փայլուն կէտեր, կայծակներ եւ բոցեր, ապակիներուն մէջէն. հազար եւ մի գիշերներու մէջ կը գտնուինք։

Թռօքատէրօ որ 78ի Արուեստահանդէսին յիշատակն է, հրաշալի կերպիւ լուսաւորուած է. շատրուանին ջուրը լուսացայտ կ'իջնէ վար, նման հալման մէջ եղող ձոյլին։ Էյֆէլի աշտարակին առաջին յարկը, մեծ կամարը, եւ գագաթը լուսեղէն մարգարիտներով կարծես զարդարուած են։ Գագաթին վրայ կը փայլի ելեքտրական փարոսն իւր չիկագոյն հուրերովը, կանաչ եւ սպիտակ, կարծես թէ փափուկ ճաշակաւ մը խոշոր աստղ մը հաստատուած է մեծ աշտարակին վրայ։ Արձակման միջոցին մէջ կը յղէ իւր ճառագայթներն ողողելով արձաններն եւ նոցա շուրջ լուսեղէն սպիտակ շրջանակներ կազմելով։ Ամէնուրեք արշալոյս։

Եւ կը տեսնես խորը, լուսացայտ աղբերաց ետեւ, մեծ գմբէթը որ հրբոյր շրջանակներով զարդարուն կ'երեւի, հապա՛ ներքնակողմն բոլոր այն ելեքտրական արեգակներն որք աչաց վրայ այն ազդեցութիւնը կ'ընեն ինչ որ պիտի ընէր աստեղազարդ երկնակամարն պայծառ գիշեր մը։ Անբացատրելի լուսաւորութիւններ զորս կ'արժէ տեսնել, հրաշագեղ տեսարան որ երբէք չը յոգնեցներ։

Երբեմն արուեստահանդէսներն գիշերը կը գոցուէին։ Առաջին անգամ 1881ի Ելեքտրականութեան արուեստահանդէսը հասարակութեան բաց թողուցին, ինչպէս կարելի էր ելեքտրական լուսաւորութեան արուեստահանդէսէ մը գիշեր ժամանակ գոցել։ Այն ժամանակէն հետէ, [illegible], [illegible], Վիէննայի, Մանչեսթէրի, Անվէրսայի, Պարսըլոնի, [illegible] արուեստահանդէսներն ամէն գիշեր իրենց դուռները բացին. սակայն հարկ էր ընել նաեւ 1889ի Փարիզեան արուեստահանդէսը, որ ա-

նակնկալ և մեծ յաջողութիւն վերստացաւ:

Կրնանք ըսել թէ՝ եկամուտն եւս արագարար աճեցաւ, եւ մարդ տխրութեան զգացմամբ մը կը համակուի երբ տեսնէ այնքան աշխատութեանց կարճատեւ լինելն, երբ տեւողութիւնը երկարի, այն ատեն այցելուներն և գործաւորները գոհ կը լինին և ծախսեալ գումարներն վատնուած չեն լինիր: Ինչ հսկայական ծախքեր եղած են արուեստահանդէսին համար որոյ տեւականութիւնը սահմանափակ է:

1889ի արուեստահանդէսը 50 միլիոն ֆրանքի կառավարական ծախքն ունեցած է. միջին հաշուով բաժնետերք 150 միլիոնն ծախսած են: Ուրեմն այդ յաղթական գործին համար 200 միլիոն վատնուած է: Միլիոններու հետ կը խաղանք...

Արուեստահանդէսին տեւականութիւնը 180 օր լինելով և ամէն օր 9 ժամ բաց լինելով, առանց հաշուելոյ երեկոյները, համարակալութիւնը իւր տրամադրութեան ներքեւ 1620 ժամ պիտի ունենայ այցելութիւն տալու համար նմա: Իւրաքանչիւր ժամի հասոյթը եղած պիտի լինի 123,000 ֆրանք. Երեկոյներն ալ բաց լինելով, մէն մի աւուր վրայ 5 ժամի յաւելում մ'ընելով, 180 աւուրց վրայ 900 ժամ աւելցած է: Եւ ըստ այս հաշուոյն՝ ժամուան հասոյթը կ'ելնէ 79,000 ֆրանքի:

79,000 ֆրանք... գեղեցիկ հասոյթ, և մէկ օրուան մէջ երբ այցելուք իրենց համեստ տոմսակովն մտնեն արուեստահանդէսն, ամէն ժամ, ամէն վայրկեան, և ամէն երկվայրկեան, այն ատեն օրական հասոյթը կը լինի 1,406,000 ֆրանքի կլորիկ գումարը: Մէկ [illegible] ֆրանք, ինչ մեծ թիւ մէկ աւուր համար...

Ելեքտրականութիւնը արուեստահանդէսին երեկոյներուն մեծագոյն փայլն է, առանց նորա կարելի չը պիտի լինէր փայլուն լուսավառութիւն մ'ունենալ, կազը բացարձակապէս մերժուած չէ, և Շան դը Մարսի մէջ երկրորդական է իւր դերը: Ամէն ժամ 15,000 մեթր խորանարդ կազ կ'սպառի. Թրոքատէրոյի պալատը մէկ ժամուան մէջ 10,000 մեթր խորանարդ, աշտարակն 700 մեթր խորանարդ և հսկայ գմբեթը 1,000 մեթր խորանարդ առանց խօսելու պարտէզին, պզտոտալից և այն կազերուն վրայ:

Ելեքտրական լուսավառութեան համար Շան դը Մարսի մէջ վեց կեդրոնական կայարաններ հաստատուած են. Կռամ ընկերութեան, Էտիսըն, Ելեքտրական փոխանցման, ելեքտրական լուսոյ, Տիւքօմըն, և այլ ընկերութեանց կայարաններն: Այս ամէն կայարանաց մէջ կը գտնուին կաթսաներ, շարժիչներ, Տինամօներ որք կ'արտադրեն ելեքտրական լոյսն որ մեկնելով այդ զանազան կայարաններէն կ'երթայ բաշխուիլ արուեստահանդէսին ամէն մասանց մէջ: Ամբողջ կանթեղաց թիւը պիտի բաւէ հարիւր հազար հոգի պարունակող քաղաք մը լուսաւորելու.

Մեքենայից պալատը ցերեկուան նման լուսաւորուած է: Հրաշալի պայծառութիւն մը: Ոչ ուրեք կը տեսնես ստուերի փոքր հետք մը:

Եւ պէտք զարմանաք անշուշտ երբ ըսեմ թէ՝ մէկ ժամ այդ մեծ քանակութեամբ լոյսը արտադրելու համար 20,000 քիլօկրամ գետնածուխ կը գործածուի: Մէկ կողմը հնոց մը. միւս կողմը՝ լուսոյ հեղեղներ. Գետնածխոյ ջերմութիւնը կը փոխուի ելեքտրականութեան և ելեքտրականութիւնն լուսոյ:

Ամէնքս ալ գիտեմք որ գետնածուխն բրածոյ բոյս մ'է կազմուած արեգակին ազդեցութեամբ երկրաբանական խաւերուն մէջ: Ուրեմն դարձեալ արեգակն է որ տարբեր ձեւոյ մը ներքեւ զմեզ գիշերը կը լուսաւորէ: Ելեքտրական ճառագայթք, այո՛, բայց ամէն բանէ վեր, արեգական ճառագայթք...:

(Մ. Գ. ՄՕՋԵԱՆ)

ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՅՑԵՏՈՄՍ

100 Հատը 5 Դահեկան

Լուանդոյն քարթօնի վրայ ամենլեզուաւ կպատրաստուի Ուզուրլեան և Ընկ. տպարանն, Կ. Պոլիս, Սուլթան Համամ, Սախտիյէ խան, Թիւ 5.

## ԻՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

—Նէրէյէ օ, ուստա Տ... պու ագշամ, պէօյլէ տիւքքեանը էրքէն քաբալըբ տա, թօրպալարը սըրթլայըբ կիտիչ, եօքսա մը թաւուքլարա արբա ալմըշըն:

—Եօք ախպար քայնըմըն թագըմը քէօյտէն պիզէ միսաֆիրլիյէ կէլմիշլէր տէ, էվէ ուֆաք թէֆէք կէօթիւրիւեօրըմ:

—Կէնէ պանա մանթարլար աթմա, պէն օ խամխումլարը եութմամ:

—Ճանըմ սանա եալան սէօյլէմէյէ նէ՞ պօրճում վար:

—Էօյլէ իսէ քըզընըն տիւյիւնիւնիւ նէյէ՞ պէնտէն սաքլայօրսըն:

—Ծօ՛ ախպար, տուլա՛ մը կէօրիւյօրսըն, տահա պէնիմ էվլէնտիյիմ անճաք իքի սէնէ վար եօք պիր չէյ տիր, կէլինլիք գըզըմ նէրտէ՞ն օլաճաք:

—Նէ իսէ, չօգ լագըրտը իթմէ տէ չու քէհաթտան պիրազ չէքէր չըգար, պարէ տիւյիւնիւնէ կէլմէյօրսաք չէքէրի օլսուն եէմիշ օլալըմ:

—Պուլուր գարտաշըմ, էյէր միտէն չէքէր իսէ հէփօրնի տէ նէ, աֆիյէթ օլսուն:

—Պու նէ՞ ախպար:

—Նէ օլաճաք, թավուք քըրքընթըսը, չօգտան պէրի տիւր քի, ճանըմ պիր էքշիլի իսթէյօր ըտը, պու կիւն պագտըմ քի պիզիմ ուստա Սիմ... 10, ալըյօր, քաչա ալտըն տէտիմ իսէ չօրսա տէտի, պիր իքիւք տէ պէն վէրտիմ, եարըմ օքքա ալտըմ, էվտէ պու ագշամտան բիշիրթտիրիրիմ, եարընտա սուլունա պիր կիւզէլ չօրպա եափտըրըրըմ, հազըր միսաֆիրլէրէ տէ թաւուք սուեունա չօրպա իքրամ իթմիշ օլուրուզ:

—Նէ իսէ պարէ կէլ չունտա պիրէր թէք չաքալըմ, սոնտա պիր լաֆըմ վար սէօյլէյիմ:

—Եօ՛ք ... ամա՛ն խըրեանէթ, պու ագշամ վագթը ժիլէ էվէ կիտէյիմ, միսաֆիրլէր օնըմ պանա պէքլէրլէր:

—Աճէմ կէլ սանճաքտա օլսուն պիրէր թէք չաքալըմ, հիչ օլմազսա պիրազ եօրկունլուք ալըրըզ

—Օրի՛ստէ... պույուրուն..., ճանըմ:

—Պիտէ պիրէր տիրք մօլտոնրսանա։

—Օ՛ նէ . . . ճռչյատ Ա . . . մէջն տանկըլօխլարը տօ՛լտուրմանա։—

—Բէք էյի հաճիյաղա՛, սաուըյմա։

—Տաուըլմա ամա, լաֆ տէյիլ պու. պուրայա փարա վերիյօրըզ, է՛յ, մուհապպէթ է։

—Աֆիյէթ օլսուն ։

—Դու նէ սէրթ բագը վերմիշ ախպար, առէթա ինսանըն ճիյէրինի փարչա փարչա իտիյօր ։

—Ատամ բաքը տէտիյին տէ պիրազ տօքանաքլը օլմալը քի տատընը ալասըն ։

—Էյի ամա, պիզ սէնին կիպի հէր կիւն տէօնմէ քէպապը եէմէյօրըզ, պիզ Բ. Ց. Փ. իլէն կինիւմիւզի կէչիրիյօրըզ։

—Նէ իսէ ալ տէ չունու չաքալըմ։

—Նէ էտէյօրսըն ախպար սօնը չօղա գաչար։

—Ատամ նէ օլուր պու կիւն չաբաթ տըր, հա՛ սանա պիր չէյ տէյէճէյիմ, կէչէնտէ էվէ կէլտիմ իսէ կէնճտէն պիր գատըն կէօրտիւմ աճէպ օ՞ մուտուր գըզընըզ ։

—Եօգ ախպար, օ կէօրտիւյիւն ասըլ պէնիմ ֆամիլեամ տըր ։

—Ճանըմ պէնիմ տէտիյիմ անճաք օն սէքիզ օն տօքուզ եաշընտա վար իտի ։

—Է՛ . . . տահա պէն քա՞չ եաշընտայըմ, պապամըն էօլտիւյիւ սէնէսի օթուզ եէտի եաշընտայըտըմ ։

—Պապանըն էօլտիւյի գաչ սէնէ վար։

—Դու այ չըքարսա գըրգ իւչիւ պիթիրիր գըրգ տէօրթէ կիրէր։

—Էհ, էյլիյինիզէ ։

—Աֆիյէթ չէքէր օլսուն, հէմէն նէ տէյիմ, Ալլահ պէօյլէ մուհապէթիմիզի էքսիք իթմէսին ։

—Ամէն ,

—Ինշալլահ սէնին քարշընտա տա պիր գըսմէթ չըգարսա էվ պարք սահիպի օլուրսուն ։

—Տուվա էթ քի պէնիմ գարշըմատա չըգան սէնինքի կիպի միտէնի՞ գավի գարը օլսուն ։

—Նիչի՞ն ։

—Զիւնքի էյի պիլիրիմ քի միտէսի նազիք օլուրսա իւքի կիճետէն, էս աս մարդուն հօտած բերանը չեմ կրնար քաշէր, տէյէրէք եալլահ պապաթօրընըն եախօտ անասընըն էվինէ կիտէր։

—Էյ պիզիմքինին միտէսի գավի օլտուղը նէտէ՞ն պիլտին։

—Էկէր միտէսի գավի օլմասայըտը, օ եաշտա օ կիւզէլլիքտէ սանա մէյիլ վերմէզտէ ալմազ ըտը ։

—Էֆէնտիմ օնուն կիւզէլլիյի եարըն օ պիր կիւն կիտէր ամա, պէնիմ կիւզէլլիյիմ կիտէրէք արթար ,

—Ատամ սէնին կիւզէլլէյին նէրտէ, գուլբը գըրըք կըլկըլարա պէնզէրսին։

—Սէն օնա նէ պաքարսըն պէնիմ կիւզէլլիյիմ տէ ՔԷՍԷՄՏԷ ։

—Եօյլէ իսէ օնա տէյէճէյիմ օնգ, նէ իսէ չունլարը չաքալըմ տա վագթի իլէն եօլա չըգալըմ, սօնրա կէճ գալըրըզ, մուհապպէթինիզէ Տ . . . աղա։

—Աֆիյէթ զըգըմ օլսուն ։

—Աղըլըն թուլթուլսունտա քէսէն աչըլըրըն։

—Ամէն ։

—Շու հիսապըմըզա պագսանայ ուստա Ա . . . ։

—Ճանըմ պիր չէյ տէյիլ 24 քաթէք էթմիշ 6 ղըրուշ ։

—Պէնտէ պապամտան գալմա պիր իքիլիք վար իւստիւնիւ տէ ուստա Տ . . . թամամլասըն ։

—Վէրէյիմ ախպար, վէրէյիմ, նէ օլուր օ սուրաթը սէնտէ իքէն խատէրսէն հէփսինի վէրէյիմ, նէ չըգար օնտան ։

—Սանքիմ եօյլէ պիր չէյ էթսէն փէնա իթմէզսին, պարէ չունտան պիր թիւթիւն ալայըմ տա քաչ քի իչէրսէմ էօլիւլէրին ճանընա օղուրմիս չըգարայըմ. չիմտիլիք գիչեր բարի ։

—Գիշերլոյս բարի կէնէ պիզի ունութմա միւսիւ Բափ քաչան, ըսելով իրարմէ վերջնապէս կը զատուէին ։

Ժամը 11ին տուն տերադարձող ուստա Տ . . . ը, գիշերուան ժամը 3ին պատէ պատ զարնուելով հազիւ հազ տունը կը գտնայ, երկու օխա տուած խաւողէն դրեթէ 1 սալխըմ մը հետ տանելով ։

—Զա՛թ . . . չա՛թ . . . չա՛թ ։

—Վո՞ւյ . . . զիֆտօ խմեռ պիլէքիմ, աս կէնէ աս ի՞նչ հալ է։

—Սուս օլ քարը պէն չէհրօշըմ ամա խելքս գլուխս է։

—Բա՛ . . . ինչի՛ն խելքդ գլուխդ է, քի , գետնէ գառնի կը կլտորիս կոր , վայ մեղքիս ։

—Սուս օլ բաթըրտը խոտէմէզ , քիչ մը բռնէ ալէ տէ իւժըմ ։

—Խենթ էօ՛ր փոնտսէն չի չինած, կը խմուի՞ յոտաւ ։

—Դուն պիլլօրին մէջը ջուր լեցուր, գդալ մը փանտսէ իլէն քիչ մըն ալ շէքէր դիր տէ աղուոր մը խառնէ բեր։

—Առ նայիմ խմէ տէ խելքդ գլուխդ ժողվէ ։

—Օ՛խ, պիրազ ագըլըմ պաշըմա կէլտի ։

—Հէմէն, ի՞նչ ըսեմ , աս իճատ ընողին մեռելները լուսերուն մէջը պառկին ։

—Նէ գատար տա տուվա էթսէն կէնէ ազ տըր քարը ; չիւնքի պիրինճի ֆուքարա էզաճըսը տըր ։

—Տէ՛ տէ , խելքդ գլուխդ ժողվէ , միսաֆիրները հիմակ ուր է նէ կուգան ։

—Ո՞ւր գացին , հոս չե՞ն ։

—Զէ՛ Մ . . . աղան առաւ քիչ մը թուէնին ճամբան պտըտցնել տարաւ. պարէմ անոնք չեկած , ըլլանք տեղաւորցնենք տէ սուֆրան չակենք , ի՞նչ ուտելիք բերիր ։

—Նայէ , կէս օխա թավուխի խըրընթը եմ բերեր , անոնք վաղը էքշիլի մը չինէ , լնճիր բերեր էմ , ուզիւմ բերեր էմ ։

—Սման տուն ալ, առտուն քեզի ըսի օր վրան քէրթիքլի խավունէն բեր տէյի ինչո՞ւ չի բերիր ։

—Հիմա ան ուտողը կը հիւընդնայ կոր ։

—Հայտէ ան անանկ ըսենք , միւք օ՞ւր է , սո բոթլիճանները բերեր էս նէ ինչի՞ս վրայ պիտի ձգ՞եմ ։

—Վաղ առտու ճիյէրճին անցնի նէ, երկու հատ եւերէք կառնենք վրան ձգէ ։

—Բա խենդ էս ի՞նչ էս , կէնէ իս մի ճաթեցներ ։

—Կուզես ճաթէ, կուզես մեռիր , ասոր մեռնիս նէ վաղը երկու հարիւր հոգի օտկս կուգան ։

—Հայտէ կնա ցնդած , ինչի՞դ , ճահիլութա՞նդ չէնէ մի նինէյիս տարուընէ մնացած կուլխի տրած ֆէսիդ ։

—Դուն ֆէսիս ի՞նչ կը նայիս , էս ան գլուխս կը գնեմ նէ , հօրմէս յի-

չատակ մնացած է քէ, չի մօռնամ տէ-յի՝ հէմ ինծի խանօղը եադըը ֆէմի՛ս պիտի նայի, չէնէ մի, քեսէյիս կեցու-նութիւնը ։

—Ձի՛ նայիս, քեսէմ կեցունէ չէ, եաղով պաղով կը նայիս կոր, —իրեք տարի է քեզ առնելս թօփը թօփը 2 օխայ միս էս պէրեր սա չէ՞ մի քեսէ-յիմ կեցունութիւնը ։

—Էֆէնտիմ միս ուտել կուզես նէ ցորեկները ալ մօրըդ տունը գնա, հոն մէկ քանի հոգի, մէկ եղիք անոր ասոր միսը կերէք ։

—Էս քեզի բան մը ըսեմ, եաս ա-սանկ ամէն վախիմ ճիյէր, եիւրէք, չեմ կրնար ուտե՛լ ։

—Ես ալ ամիսը 2 օխա միս չեմ կրնար առներ ։

—Ես ալ վաղուընէ թէզը չի գայ, բաթիս կը քաշեմ չիտակ կերթամ ։

—Ո՞ւր կերթաս ։

—Մօրըս տունը ։

—Մօրըդ տունը չի գացած նա-ֆախաս կապէ ։

—Աս մարդը տըլլացե՞ր է, ի՞նչ է եղեր. նաֆախան երի՞կը կնկան կը կապէ, չէնէ, կնիկը էրկան ։

—Իմ քեսէյիս նայիս նէ կնիկը պօրճլու է կապել ։

Ծիչդ այս պահուս դուռը կը բաց-ուի և պտըտելու գնացող հ՛ւրերն գալով կը հաշտեցնեն զիրենք ով գի-տէ քանի աւուր համար ։

ԿԱԿՕՍ

## ԱՍԿԷ ԱՆԿԷ

Գիւղացի մը տեսնելով որ շատեր կարդալու ժամանակ ակնոց կը գոր-ծածեն, ինքն ալ կուզէ հատ մը գը-նել։ Ուստի այս նպատակաւ ակնոցա-վաճառի մը խանութը կը մտնէ։ Ակ-նոցավաճառն ակնոց մը կը դնէ գիւ-ղացւոյն քթին վրայ և սա գիրք մը առնելով բաւական ժամանակ անոր վրայ նայելէ վերջ կըսէ ։

—Պարո՛ն, այս ակնոցը բնաւ օգ-տեցութիւն չըրաւ ։

—Առէք պարոն, ահա ուրիշ մը ։ Ակնոցավաճառը իւր ակնոցներուն ա-մենալաւ տեսակէն քանի մը զոյգ կը ներկայացնէ գիւղացւոյն բայց տես-նելով որ ան գործածել չէր կարող կարդալ, կըսէ ։

—Բարեկա՛մ, կարծեմ թէ դուք բնաւ կարդալ չէք գիտեր։

—Եթէ կարդալ գիտնայի, քու ակնոցներդ ի՞նչ պիտի ընէի, կը պա-տասխանէ գիւղացին։

***

Գող մը լուսնոյ խաւարման գի-շերը հարուստ մարդու մը մտենալով կամաց մը անոր ժամացոյցը գրպանէն վերցնելէ վերջ, լուսինը ցուցնելով կը-սէ.

—Բռնուեցա՛ւ ։

—Ո՞ւր է, ես այդպիսի բան մը չեմ տեսներ կըսէ հարուստը ։

—Քիչ մը վերջ պիտի տեսնէք. կը պատասխանէ գողը և կը հեռանայ ։

***

Զինուոր մը մինչ պաշարեալ քաղա-քի մը պարսպին վրայ կը քնանար, թնդանօթի ռումբ մը գալով իւր գը-լուխը կառնէ կը տանի։ Իւր ընկերը զայս տեսնելով կը գոչէ.

—Ո՜հ, ի՜նչ մեծ դժբաղդութիւն, երբ ընկերս արթննայ, զինքն առանց գլխու պիտի գտնէ ։

***

Երբ հնահաւաքը աղբերանոցները կը խառնէ, շներն ինչո՞ւ կը բարկա-նան և հաչելով վրան կը վազեն ։

—Վասն զի կը վախնան որ չըլլայ թէ նա ոսկորներն ալ իւր կողովին մէջ նետէ։

***

Խնճոյքի մը ատեն հրաւիրեալնե-րէ մին իւր առջեւ դրուած գինիի գա-ւաթին մէջ ճանճ մը տեսնելով մա-տին ծայրով դուրս կը հանէ զայն և գինին խմելէ վերջ կրկին մէջը կը ձը-գէ ։ Զայս տեսնելով իւր ընկերը կը հարցնէ ։

—Ինչո՞ւ ճանճը կրկին գաւաթին մէջ ձգեցիք ։

—Ես գինին ճանճով չեմ խմեր, սակայն չեմ գիտեր թէ ուրիշներ ի՛նչ կերպ կը խմեն ։

***

Միականի մը առաւօտուն կանուխ սապատողի մը հանդիպելով, ծաղրա-կան կերպով կըսէ . . .

—Կարծեմ այսօր շատ կարեւոր գործեր ունիք կարգադրելու։

—Ի՞նչէն այդպէս կը կարծէք ։

—Որովհետեւ այդչափ կանուխ կռնակնիդ բեռ մը առեր կերթաք կոր։

—Արդարեւ շատ կանուխ է որով-հետեւ դուք ալ դեռ մէկ պատու-հաննիդ բացեր էք։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

# ՕՍՄԱՆԵԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ

—

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Մէարիֆ նէզարէթը ճէլիլէսի մէ-ժուրիյէթէն Աշճեան Միքայէլ էֆ. մէ-քեաթիպը միւլքիյէտէ թէտրիս օլըն-մագ վէ պիրինճի ճիլտի օլմագ իւզրէ «Պատմութիւն Օսմանեան Պետութեան» սերլէվհասը թահթընտա էրմէնիճէ պիր թարիխը Օսմանի թէէլիֆ ունէշր իթ-միշ տիր ։

Հագիգաթէն պիր սուրէթը մաթ-լուպէ վէ միւքէմմէլէտէ թէէլիֆ ի-տիլմիշ օլան իշպու թարիխը Օսմանի տէրս քիթապը՝ հէր քիթապճը տուք-քեանլարընտա վէ պախուսուս Պէր-պէրեան մաթպաասընտա 5 ղրշ. ֆի-յաթլա սաթըլմագտա տըր ։

### ԼԷՖ ԱՆՈՒՆ ՁՈՒԿԸ

(ՍՈՆԷՆՖԷԼՏ ԱԼՓԷՐԷՆ)

—

Այս տարօրինակ ձուկը, համբաւաւոր իւր թունաւոր փուշերովը, բնիկ է Հնդկաց ովկիանոսին մէջ գտնուող Մաւրիչըս կղզւոյն եզերաց ծանծաղ ջուրերուն. Ոսկալի և այլանդակ երե-ւոյթով ձուկ մ՚է այն, միջին հաշուով 16էն մինչեւ 18 մատնաչափ երկայնու-թեամբ ։ Ունի սանդանման, խորշոմ-եալ, ձիթագոյն մորթ մը, որոյ վրայ կ՚երեւին թուխ, դորշ եւ սպիտակ բիծեր, եւ որ սակայն ընդհանրապէս ծածկուած լինելով տիղմով եւ ծովա-յին խոտերով, մեծ դժուարութեամբ

կը մաքրուի։ Որովհետեւ այս ձուկ, որ կրէ ցեխի գոյն, մօտէն իսկ դըժուար է զանազանել զայն ցեխէն. և չընորհիւ գլխուն գագաթին մօտ հաստատուած փոքր փայլուն աչքերուն, կրնայ գարանամուտ ըլլալ անանց տեսնուելու իր թշնամիներէն։ Ձուկն կը պարզէ իր լանջական մեծ թեւերը և կը կծկի ցեխին մէջ, գլուխն ուսին թանձր ծալքերէն վեր բռնած, եւ իր մեծ բերան լայն բացած, պատրաստ բռնելու ո՛և է անզգոյշ ձուկ որ իր քովէն կ'անցնի։ Լէֆ ներս կը քաշէ ու կուլ կուտայ իր զոհը. և վա՜յ այն անձին որոյ ոտքը կամ ձեռքը կը դպչի նմա։ Ես. ծովային նորօրինակ առարկաներու ի խնդիր ելած ժամանակս, յոյժ թանձր կօշիկներ հագնելով յաջողեցայ զերծ մնալ այս ձուկերուն խայթոցէն։ Յոյժ կը բաղձայի բռնել այս ձուկէն հատ մը, և փորձեր ընել անոր վրայ. և ուստի փորձառու ծեր ձըկնորս մը ըրի ինձ առաջնորդ։ Բնիկք կ'ատեն լէֆը, և հակառակ նորա փուշերուն պատճառած վտանգաւոր վէրքերուն, ճարտար ձկնորսք կը բռնեն զայն ձեռքով, և երբեք չեմ լսած թէ նոքա հանդիպած են ո՛և է արկածի։ Երբ լէֆ մը կը տեսնուի, զգուշաւոր ձկնորսը, գիտնալով թէ ծանրաշարժ ձուկ մ'է այն, յուշիկ կը մօտենայ նըմա, և ծռելով նորա վրայ մեղմով կ'իջեցունէ իր ձեռք մինչեւ նորա բերանին մակարդակէն վար, և յանժամ յանկարծ բռնելով նորա ստորին ծնօտը, դուրս կը քաշէ զայն. Ձուկը կ'աշխատի ազատել ինքզինք, սակայն եթէ ամուր բռնուի չկրնար գործածել իր փուշերը։

Առաջնորդս քանի մը հատ բռնեց այս ձուկերէն։ Մին դրինք նաւակի մը վրայ, երբ խթեցի նորա լանջական թեւերուն ներքեւի կողման մորթը, ողնային թեւը, որ ձկան հանգարտ վիճակին մէջ կռնակին վրայ ամփոփուած կը մնայ, իսկոյն վեր բարձրացաւ, և փուշերը ցցուեցան, և երբ նորա թեւին դպայ, խառոչաւոր փուշերէն դուրս ցայտեց կանաչագոյն մածուցիկ նիւթ մը, և համարեցայ թէ այս հեղուկն էր այն թոյն որոյ պատճառած վէրքը յոյժ դժուարաւ կը բուժի։ Այս թոյնին վըտանգաւոր բնութիւնը ստուգելու համար, կատուի ձագի մը թաթին մէջ մխեցի մին այս ձկան յառաջակողման փուշերէն, որք կ'ըսուի թէ ամենէն աւելի թունաւոր են. Թոյնին ազդեցութիւնն անմիջապէս զգալի եղաւ, և կատուն մէկ ժամէն մեռաւ ջղաձգական տագնապներով։

Տեսայ խեղճ մարդ մը, որ լէֆի մը վրայ կոխելով վիրաւորուած էր իւր աջ ոտքին ըլթամատը։ Վէրքը շատ ուռած էր. և ես վիրաբուժական դանակով մը բանալով զայն անուշադրի զօրաւոր լուծուած դրի անոր վրայ։ Վիրաւորեալ մարդուն ընկերք մօտակայ տունկի մը տերեւներն շինեցին սպեղանի մը, որ սակաւ ինչ մեղմեց վէրքին ցաւը։ Գաւաթ մը լեցուն շաքարօղի տուի մարդուն, վասն զի նա վիրաւորեալ մատին սաստիկ ցաւէն գրեթէ կը նուաղէր, և մեծապէս կը վախնար զի մի գուցէ թոյնին ազդեցութենէն իւր ծնօտին մկանները կարկամէին։ Մարդը շատ ամիսներ կրեց այդ վէրքին հետեւանքները.

Լէֆ ձուկին թոյնը նման իժին թոյնին, բաղդատաբար նուազ ազդեցիկ է երբ կը մտնէ մարմնոյն ճարպով ծածկուած մաս մասին մէջ, ուր յոյժ փոքր երակներ միայն կան, սակայն երբ մտնէ երակի մը մէջ, յանժամ ի յայտ կը բերէ իւր բոլոր ազդեցութիւնը։ Երբ թոյնը կը մտնէ մարմնոյն անդամներէն միոյն ծայրը, անմիջապէս ցաւ կը պատճառէ. կարմիր շըրջանակ մը կ'երեւի վէրքին շուրջը, որ արագ կը սկսի ուռիլ։ Քիչ մը վերջը կը գոյանայ պալար մը, որմէ, երբ ճեղքուի, թխագոյն դարշահոտ շարաւ մը կը հոսի, միեւնոյն ատեն յառաջ կու գայ դիմաց դեղնութիւն, թմրութիւն, և նուաղումն, որոց կը յաջորդէ յաճախ զառանցանք և մահ։

Ձկնորսք կը գործածեն հետագայ դարմանը. կը հաւաքեն մանաւոր տունկի մը տերեւները և ցօղունները, որոց հետ կը խառնեն աղ մը աղ. Խառնուրդը կը փաթթուի պանանայի տերեւի կտորի մը մէջ, ապա կը դըրուի տաք մոխիրի մէջ. և հոն կը թողուի մինչեւ որ տերեւները կ'առնեն խիւսի (լափա) ձեւ։ Վէրքը նախ կը գըրծուի դանակաւ, ապա այս խիւսը կը դրուի անոր վրայ իբրեւ սպեղանի, և կը փոխուի ամէն չորս ժամը անգամ մը։ Բնիկներէն ոմանք մեծ հաւատք ունին այս դարմանին վրայ, սակայն ամէնքն ալ կը սոսկան լէֆէ թունաւորուելէն, վասն զի վէրքը, եթէ երբէք բուժուի, երկար ժամանակ կը բուժուի, երկար ժամանակ կը պահանջէ, և ցաւն անտանելի է։ Մաւրիշըս կղզւոյն հիւանդանոցներէն ոմանց այցելելով, տեսայ լէֆ ձուկէն վիրաւորեալներ։ Մանաւորապէս ուշագրաւ էր մարդու մը վիճակը։ Այս անձ մինչ ձկնորսութեամբ կը պարապէր ծովեզերքէն բաւական հեռի տեղ մը ժայռերուն մէջ, լէֆի մը վրայ կը կոխէ։ Ձուկը կը խայթէ մարդուն դարշապարը։ Ձկնորսը չունէր ընկեր, և վէրքին ցաւն այնքան սաստիկ էր որ մեծ դժուարութեամբ կրցաւ եղաւ ինքզինք տանիլ մինչեւ ի ծովեզր։ Երբ ջուրէն դուրս ելաւ, ինկաւ գետին և այնպէս մնաց բաւական ատեն մինչեւ որ մարդիկ տեսան զինքը և եկան իւր քով։ Սրունքը և ոտքը սոսկալի կերպիւ ուռած էին. այս վիճակին մէջ նա տարուեցաւ հիւանդանոց։ Քանի մը օրէն վէրքը կեղեւուեցաւ, և անոր տեղը մնաց մեծ ծակ մը։ Երկու ամիսէն յետոյ հազիւ կրնար գործածել ոտքը. սակայն տարի մը չկաղն ի կաղը կը քալէր, և ծովեզերեայ ժայռերուն վրայ այլ եւս ձկնորսութեան չէր երթար։

Լէֆի փուշերէն յառաջ եկած վէրքերուն նկատմամբ եզական պարագայ մ'է սա թէ վէրքին բուժումէն յետոյ որչափ երկար ժամանակ ալ անցած ըլլայ, տարւոյն նոյն ժամանակին մէջ վիրաւորեալ մասերուն մէջ ցաւ կը կը զգացուի, որպէս ցաւ... կը պատահի նաեւ օձէ խայթեալներուն ալ։

(Ա.-Ն.-Փ.-Բէր)

ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

# ԱՅՑԵՏՈՄՍ

Լաւագոյն քարթօնի վրայ ամէն լեզուաւ կը պատրաստուի գին 100 հատը 10 կէհեկան պէտք ունեցողները պէտք է դիմեն Գ. Պաղտատլեան տպարան Ցանկոբեան խան, թիւ 13 Կ. Պոլիս։

## ՖՕԹՕԿՐԱՖ

### ԳԱՐԱԳԱՇԵԱՆ ԳՈՒԼԱՅԵՐԼԵՐ

ԳՈՒՄԼԻ ԳԱԲՈՒ ՆՕ. 677

Միւշթերիլերիմիզի մէմնուն գըլմագ, էսկիտէն պէրու մէսլէքիմիզ օլտուղու ամմէնին մալումու տըր: Պու տէֆա Եվրօբանըն էն մէշհուր ֆօթօղրաֆլարընտան ձէլպ իտէրէք, օթըլյէմիզի տօնաթմըշ օլտուղումուզտան, միւրաճաաթ իտէճէք միւշթերիլէր հէր հալտէ մէմնուն գալաճագլարտըր: Դուպարը հավատա պիլէ ըէսիմ չէքիլիր: Զօճուգլար վէ չօգ տուրմաղա թէհամմիւլի օլմայանլար իչին էն սօն իւսուլտէ (էնսթանթանէ) եանի միւշթերիլերի եօրմատըգըն ըէսիմլէր չէքիլիր: Պօյնատան մատտա ֆօթօղրաֆ իչին էն մէշհուր ֆապրիգալարտան հէր ճինս մաքինա վէ լէվազըմաթ վէ էճզա կէթիրթիրիլմիշ, էյվէն ֆիաթլէ սաթըլըր:

Միւրաճաաթ իտէնլէրէ մէճճանէն տէրս վէրիլիր, մէրագլըլար իչին 180 ղուռուշա գատար մաքինալար ֆիաթլէ օլունուր:

—

## ՖՕՐԹՈՒՆԱ

ԱՆՕՆԻՄ ՈՒՄՈՒՄԻ ՍԻԿՈՒՐԹԱ ԳՈՒՄՓԱՆԵԱՍԸ

1668 թէ Պէռլինտէ թէէսիս օլունմուշ տըր.

ՍԵՐՄԱՅԷ 4,875,000 ՖՐԱՆԳ

ԻՀԹԻԵԱԹ ԱԳՃԷՍԻ 1,337,500 »

## ՏԻՒՍԷԼՏՕՐՖԷՐ

ՏԷՆԻԶ ՆԷՀԸՐ ՎԷ ԴԱՐ

ՈՒՄՈՒՄԻ ՍԻԿՈՒՐԹԱ ԳՈՒՄՓԱՆԵԱՍԸ

1745 թէ Տիւսէլտօրֆտա թէէսիս օլունմուշտուր

ՍԵՐՄԱՅԷ 3,750,000 ՖՐԱՆԳ

ԻՀԹԻԵԱԹ ԱԳՃԷՍԻ 3,099,367. 15 ՖՐ

Տէրսաատէթ բիւյաղընտա պիրլէշմիշ օլան իշպու սիկուրթա գումբանեալարը, քէֆալէթի միւթէգապիլէ իլէ հէր նէվի էմթաա վէ աղչէ կրուբօլարընը, տէնիզ, նէհր վէ գարա նագլիեաթը թէհլիքէլէրինէ գարշը պայէթլէ ֆահիշ չէրաիթ իլէ սիկուրթա իտէրլէր.

—

## ՀԱՆԶԷԱԹԻՇԷ

ԵԱՆԳԸՆԱ ԳԱՐՇԸ ՍԻԿՈՒՐԹԱ ԳՈՒՄՓԱՆԵԱՍԸ

1874 թէ Համպուրկտա թէէսիս օլունմուշ տըր.

ՍԵՐՄԱՅԷ 3,750,000 ՖՐԱՆԳ

ԻՀԹԻԵԱԹ ԱԳՃԷՍԻ 600,000 »

Իշպու սիկուրթա գումբանեասը, հէր նէվի էմլաք վէ էշեայի, անպար վէ մաղազա վէ տէրունլէրինտէքի էմթաալը, էն պիլէմէզ ֆահիշ պահաճ շարթլար իլէ սիկուրթա իտէր: Թաֆսիլաթ մալումաթ ալմագ իսթէյէնլէր, պալէտա զիքր օլունան իքի գումբանեալարըն ումում մաղազաճըլըգը պուլունան Խօթանպօլատա Պահչէ-Գաբուսունտա Բասիմ Բաշա խանընտա նումէրօ 13 վէ 14 տէ ՏԻՐԱՆ Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ էֆէնտիյէ միւրաճաաթ իթմէկլէ աալէթ օլունուր:


— 32 —

Այս քմահաճ որոշում նաւապետին գործին չէր գար. բայց իր քրոջ զաւակն այսպէս կուզէր ու պէտք էր հնազանդիլ:

Սակայն և այնպէս, Սէզառինի յաջողութիւնք երկարատև չեղան. քիչ ժամանակ յետոյ նշմարուեցաւ, որ այս օրիորդը դիւրամատչելի բնաւորութիւն չունէր: Դաւամբուռներու մէջ, եթէ պզտիկ խաղեր խաղային, իրն ընդունիլ կը բանադատէր և չէր ուզեր ուրիշ խաղերու խառնուիլ. կարճ խօսքով՝ սիրուելու մեծ տրամադրութիւն չունէր և իր պատասխանները շատ անգամ անդէպ և անպատշաճ էին:

Պարը մահու չափ կատէր. վասն զի չէր գիտեր պարել: Չէր սիրեր երաժշտութիւնն ալ, վասն զի չէր գիտեր ածել և ոչ ինչ:

Երբոր երեկոյթի մը մէջ, օրիորդ մը դաշնակի նստէր, Սէզառին ընդհուպ անհամբերութեան նշաններ ցոյց կուտար, ոտներով կը զարնէր տախտակամածին վրայ, և երբեմն ալ լսուելու աստիճան բարձր ձայնով կըսէր.

—Ասիկայ, վերջ չը՞ պիտի ունենայ արդեօք. կարծեմ բաւական մտիկ ըրինք. ասկէց զատ, ես ատոր վրայ ուրիշ խորհրդածութիւններ ունիմ, որ զոմանս կը խնդացունեն և զոմանս կը բարկացունեն. ինչու որ աշխարհքի մէջ

— 29 —

չեն ըներ ուրեմն.

Ու դասը կը լմննար:

Բայց ժամանակը կը սկսէր երկայն թուիլ Պ. տը Վապօրօնիի, երբ, Պուէգլինեի հաստատուելէն հինգ ամիս ետքը, իր քով եկաւ իր քրոջ աղջիկը, հազիւ տասը տարեկան, որ յանկարծ որբ մնացած էր և որ իր մօրեղբօր պաշտպանութիւնը կը հայցէր:

Այս պաշտպանութիւն չի զլացուեցաւ նըմա և վաղեմի նաւապետը սքանչացաւ իր քըրոջ զաւկին վրայ, երբոր հասու եղաւ անոր ամէն տենչանաց և ամէն առնական միտումներուն:

Դեռատի աղջիկն անմիջապէս ցոյց տուաւ խրոխտ ու անկախ բնաւորութիւն մը և յանձնառու կամք մը: Երբոր մօրեղբայրը կ'աղաչէր նմա կատարել այն բանն, որ հաճելի չէր իրեն, Սէզառին չէր վարաներ պատասխանելու.

—Չէ՛, չպիտի ընեմ:

—Բայց ինչո՞ւ, եթէ կը հաճիք, օրիորդ:

—Որովհետեւ ընել չեմ ուզեր:

—Բայց, սիրելի թշուառական, եթէ հրամայեմ քեզ:

—Բիւրիցս թշուառական, եթէ կուզէք, չպիտի ընեմ:

Այն ժամանակ նաւապետը խնդալէն կը ճա-

## ՏԻՇ ԹԱՊԻՊԻ

# ԺՕԶԷՖ ՆԱԼԲԱՍ

Տիշ թապիպլերինին էն մահիրլերինտէն օլուպ, քէնտիսինէ միւրաճաաթ իտէնլէրի աղ վագըթ զարֆընտա շիֆաբէզիր իլմէ.քյէ պիհադըլըն խօշնուտ իթմիշ օլան Ժօզէֆ Նալբաս էֆ. Միր.քէճիտէ Թրամվայ ճատտէսինտէ Տօյյունու Ումումիյէ իտարէսի գարշըսընտա 8 նումէրօլը մահալը մախսուստա պուլունմագտա տըր։

Թապիպը մումաիլէյհ ղայէթ մահիրանէ պիր սուրէթտէ իմալ էյլէտիկի տիշլէրի էհվէն ֆիյաթլա ֆիրուխթ իթտիկի կիպի, միւշթէրիլէրինի քէմալը հիւրմէթ վէ նէզաքէթլէ գապուլ վէ տիշ խասթալըգլարընը հիւսնիւ թէտավի իտէրէք, ճիւմլէնին մէմնունիյէթինի գազանմագտա տըր։


ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆՇԱՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ


# ՖՌԱՆԳՖՕՐԹՈՒԱԶ

## ՏԷՆԻԶ ՍԻԿՈՒՐԹԱ ԳՈՒՄԲԱՆԵԱՍԸ

Սէրմաեէ ֆրանգ 6,250,000 Իհթիեաթ ագչէսի ֆրանգ 1,270,000

Մէզքիւր գումբանիա տէնիզ գազալարընա գարշը վաբօրլարտա վէ կէմիլէրտէ եիւքլէնիլէն մալլէրի, վէ քէզալիք բօսթա իտարէլէրինէ թէսլիմ օլունան միւճէվհէրաթ վէ նախտ պանգնօթ էվրագը զահէթ էհվէնիեէթ վէ սուհուլէթլէ սիկուրթա իտէր։

Պու ճիհէթլէ մէպալիղի քիւլլիեէեի սիկուրթա իտէպիլմէք իչին իշպու գումբանիա Էվրօբատա 13 թանէ պիւեիւք սիկուրթա գումբանիալարըյլա պիրլէշմիշ տիր։ Պունլարըն թէքմիլ սէրմաեէ վէ իհթիեաթ ագչէսի 100,000,000 ֆրանգը կէչէր.

Էքմիլ Թիւրքիա աճէնթէսի

## ՀԱՄՊՈՒՐԿ ՄԻՒՆԻԽ ՊԻՐԼԷՇՄԻՇ

### ԵԱՆԿԸՆԱ ԳԱՐՇԸ ՍԻԿՈՒՐԹԱ ԳՈՒՄԲԱՆԵԱԼԱՐԸ

| | |
|---|---|
| Սէրմաեէ | ֆրանգ 8,000,000 |
| Իհթիեաթ ագչէսի 1888 Յունիսէ գատար | ֆրանգ 4,817·262 |
| Սէնէվի իրատ 1888 Յունիօէ գատար | ֆրանգ 10,069,700 |

Մէզքիւր գումբանեալար տէբօղիթօլար վէ խանէլէր վէ անլէր իչինտէ պուլունան մալլէր վէ մօպիլեալարը զահէթ էհվէնիեէթ վէ սուհուլէթլէ, թէէմինաթը գավիեէ թահթընտա օլարագ սիկուրթա իտէրլէր։

Իսթանպօլ աճէնթէսի

Իսթանպօլ, Պահճէ-գաբու, Եօրկիատիս խան ԳԱՌՆԻԿ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ

Մալիւմաթ.—Շիր.քէթլէրիմիզին Տէրխասատէթ պան.քէրլէրի պուլունան Ներսէսեան Բէտէր վէ Մախտումու էֆէնտիլէր՝ հիսապը կէօրիւլմիւշ, վէ միւտիրիեէթի ումումիեէ թարաֆընտան թաստիգ օլունմուշ հէր կիւնա զարար ու զիեանը թազմինէ թէմամիլէ թալիմաթ ախզ իյլէմիշլէր տիր։




թէր և պզտիկ ապտակ մը կուտար Սէզառինի այտերուն, գոչելով.

—Դուն կնկան շրջազգեստ հագնելու չէիր, աղջի՛կ. դուն ծովու մարդ ըլլալու արժանի ես, քաջասրտութիւն և կտրուկ բնաւորութիւն ունիս. լաւ ուրեմն, կը սիրեմ զայդ։ Ըրէ՛ ինչ որ կը կամիս. սորվէ ինչ որ կուզես սորվիլ. բերել տուր այն ուսուցիչներն, որ քործիդ կուզան. կատարեալ իշխանութիւն կուտամ քեզ։ Միայն թէ բիդէդը սորվէ, մերթ ընդ մերթ հաճոյք պատճառելու համար ինձ. վասըն զի, կը տեսնեմ որ սա կուլ գլուխ Լէօնտի-Կաւան չպիտի յաջողի գլխուն մէջ մտցունելու զայն։

Օրիորդ Սէզառին՝ ձի հեծնալ, զինամրցութիւն ընել, աղեղ նետել, սառին վրայ չմշկով սահիլ, լողալ և փառերուն վրայէն ցատկել սորվեցաւ, և, տասներկու տարուան միջոցին, իր մօրեղբայրը կը կիթէր բիդէդի, ժադէդի, տապալոյ և ճատրակի մէջ։

Նաւապետը խենդ կըլլար իր քրոջ զաւկին վրայ և կը փափագէր որ իր տան գլխաւորն ըլլայ այն։ Սէզառինն էր որ հրամաններ կուտար սպասաւորաց և Լէօնտի-Կաւա, որ անոր կը հնազանդէր ինչպէս իր տիրոջ, երբեմն կը խաբուէր ու կ'անուանէր զայն.—Նաւապե՛տ։



Բայց մարմնամարզութեան և ասպետական կրթութեանց մասին իր ունեցած յօժարութեան հակառակ, փոքրիկն Սէզառին, որ տասն և հինգ տարու եղած էր յայնժամ, հասկըցաւ որ ձմեռուան եղանակին Պաէդինեւի մէջ կարելի չէր զբօսնուլ. ուստի քանի մը ամիս Բարիզու մէջ անցունել ուզեց։ Թէև Նաւապետը լաւագոյն կը համարէր ընդ միշտ բնակիլ Պաէդինեւի ստացուածքին մէջ, բայց հասկըցաւ որ չէր կրնար միշտ աշխարհքէ հեռու պահել մանկամարդ աղջիկ մը, զոր օր մը ամուսնացնել պէտք պիտի ըլլար։ Ուստի վարձու բռնեց գեղեցիկ տուն մը ի Բարիզ և գացին հոն տեղաւորուեցան ձմռան միջոցին։

Նաւապետը հարուստ էր. շատ մը այցելութիւններ և շատ մըն ալ հրաւէրներ ընդունեցաւ հոն։

Սէզառին, թէև տասն և հինգ տարեկան, տասն և ութ տարու աղջկան մ'երեւոյթն ունէր։ Շնորհաւորական խօսքեր ուղղեցին առ Պ. տը Վաբօրան իր քրոջ աղջկան համար. Սէզառին ալ՝ ինքզինք ընդհանուրին սքանչացման և գովեստից առարկայ տեսնելէ խրոխտացած՝ նախ և առաջ աշխարհքէն համ առաւ և ուզեց որ իր մօրեղբայրն ալ հացկերոյթներ և նրբէկոյթներ տայ։